

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Լ.Գ. ԶՐԲԱՇՅԱՆ, Միսսիս Մեծարենց, Երևանի Համալսարանի Հրատարակչություն, 1977, 192 էջ:

Մեծարենցի նկատմամբ բուռն վերաբերմունք են դրսևորել դեռևս հեղինակի կենդանության օրոք: Հետագա ընթերցողներն ու ուսումնասիրողները ավելացրել են հետաքրքրությունը Մեծարենցի ստեղծագործության հանդեպ, որովհետև բանաստեղծական այն բարդ աշխարհը, որ երկնել է զարմանահրաշ պատանին, ունի խոր համամարդկային բովանդակություն, անդիմադրելի հմայի ու գրավչություն, աստիճանաբար բացահայտվող գեղեցկություններ:

Էդ. Զրբաշյանի «Միսսիս Մեծարենց» մեկագրությունը բանաստեղծի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված հանրագումարային աշխատություն է, ուր համակողմանի ֆենոլոգիան են առնված Մեծարենցի գրական ժառանգությունն ու նրա շուրջ ստեղծված գրականությունը: Այս ուսումնասիրությունն առաջին անգամ լույս էր տեսել 1958 թվականին. այժմ Երևանի համալսարանի հրատարակչությունը մենագրությունը վերահրատարակել է հեղինակի կատարած բազմաթիվ լրացումներով ու փոփոխություններով:

Վերամշակված այս հրատարակության անհրաժեշտությունը վաղուց էր զգացվում, որովհետև առաջինն ունեցել է սուղ սպախանակ: Հրատարակի վրա շկար մեծ բանաստեղծի գրական վաստակն արժեքավորող ուրիշ ամբողջական աշխատություն, ըսկ մամուլում եղած սակավաթիվ հոդվածները հիմնականում նվիրված էին մասնավոր հարցերի:

Կարևոր է և այն հանգամանքը, որ իր աշխատության ձևն ու կառուցվածքը, հիմնական դրույթները պահպանելով՝ հեղինակը շուրջ երկու տասնամյակի հեռավորությունից կատարել է արժևավոր լրացումներ, անհրաժեշտ փոփոխություններ, որոնք աշխատությունը դարձրել են առավել կոտ և ամբողջական, հարուստ ու կատարյալ:

Մեծարենցի գիտական կենսագրությունը շարադրելիս էդ. Զրբաշյանը հիմնականում օգտագործել է բանաստեղծի առաջին կենսագիր Քորոս Ագառյալի ու մյուս ժամանակակիցների բազմաթիվ տեղեկություններն ու վկայությունները, որոնք սփռված են մամուլում ու զանա-

զան արխիվներում: Հեղինակը կատարել է ծավալուն բանասիրական-ֆենական աշխատանք, հանգամանորեն վերլուծել և արժեքավորել է նաև նախորդ ուսումնասիրողների աշխատությունները, ընդհանրացրել նրանց արդյունքները: Մեծարենցի գրական ժառանգությանն էդ. Զրբաշյանը ցուցաբերել է գիտական ուրույն, նախորդներից տարբեր մոտեցում: Բանաստեղծի կարևատև ստեղծագործական ուղին մի շարք բաժանումների ենթարկելը համարելով անպատակահարմար՝ նա կիրառել է քեմատիկ-պրոբլեմային սկզբունքը: Մեծարենցի ժառանգությունը նա դիտել է յնքև մեկ ամբողջություն, սպա նրանից առանձնացրել և հաջորդաբար ֆենել է մի շարք խնդիրներ: Այդպիսով, իբրև գրական ակնառու երևույթ, Մեծարենցը մենագրության մեջ ներկայացվում է դարակարգի գրական խալտարդեո հոսանքների, արևմտահայ հասարակական-ֆաղակական բարդ կյանքի համապատկերի վրա, իրենց նշմարիտ, գիտական բնութագրումն են ստանում նրա գրական ժառանգության գրեթե բոլոր էական կողմերն ու դրանց հեշտ առնչվող խնդիրները, միաժամանակ առաջադրվում են նոր հարցեր՝ սպագա ֆենոլոգիան համար:

Մենագրության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել այն ժամանակաշրջանին ու հասարակական միջավայրին, ուր ձևավորվեց Մեծարենցը որպես բանաստեղծ: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տվել գրականագետին ամբողջ խորությամբ բացահայտելու բանաստեղծի ու ժամանակի կապը, ցույց տալու դարակարգի արևմտահայ իրականությանն ու Մեծարենցի ստեղծագործության բարդ փոխհարաբերությունը, ազնիվ անհատի վեկ երագանքների ու մուայլ իրականության բախման սուր դրաման: Հեղինակը Մեծարենցի ստեղծագործության բոլոր յուրահատկությունները իրավացիորեն համարում է նրա տրամադրությունների հիմքն ու աղբյուրը հանդիսացող իրականության արդյունքը, այն պայմանների արդյունքը, որոնց մեջ «սպրում և գործում էին բանաստեղծի համար սոցիալական հեհարան ծառայող հասարակական շերտեր» (էջ 47):

Այդ յուրահատկությունները, անշուշտ, մեծ շահով պայմանավորված են նաև Մեծարենցի ստեղծագործական խառնվածով, իրականության նկատմամբ ունեցած զեղազիտական վերաբերմունքով և իր՝ բանաստեղծի անձնական դրամայով: Ինչպես Մեծարենցի ստեղծագործության անանձնահատկությունները, այնպես էլ ժամանակի գրական երևույթները մեծագուրջան մեջ ստացել են կոտ, հստակ բնութագրումներ ու ձևակերպումներ:

Իր բոլոր երգահանգումները գրականագետը կատարել է Մեծարենցի երկերի ու օժանդակ փաստերի հմուտ վերլուծությամբ: Այս խրեդրում նրան մեծապես օգնել է Մեծարենց-գրականագետը, որը, թերևս առաջինը մեզանում, հարկադրված եղավ գոնեիկ հարձակումներից պաշտպանվելու համար կատարել «ինքնադատության փորձը»: Հիմնականում համամիտ լինելով բանաստեղծի՝ իր ստեղծագործության շուրջը արտահայտած մտադրումներին, անաշտ ու համեստ բնութագրումներին, գրականագետը կատարել է գիտական խոր ընդհանրացումներ՝ նրա ժառանգությունը դիտարկելով բազմակողմանի լայն կապերի մեջ: Աշխատության մեջ, կարելի է ասել առաջին անգամ, պատշաճ խորությամբ բնութագրվում է ժամանակի գրական ֆենդատության վերաբերմունքը Մեծարենցի նկատմամբ, ֆենդատություն, որ խոր ազդեցություն է բաղել բանաստեղծի վրա, հարկադրել նրան վեճի մեջ մտնելու իր հակառակորդների հետ, արտահայտելու իր գրական-գեղագիտական հայացքները: Ինչպես ժամանակակիցների, այնպես էլ Մեծարենցի հետագա ֆենդատների հետ մեծագուրջան հեղինակը հանախ է բանավիճում, հերքում նրանց անընդունելի տեսակետները, մերժում անպատշաճ գնահատականները, այսօրվա գրականագիտության նվաճումների դիրքերից արժեքավորում է անկրկնելիորեն ինքնատիպ, նուրբ ու խոր բանաստեղծի հրաշալի երգերը: *

Մեծարենցի վերաբերյալ եղած այն կարծիքները, թե նա, Վարուժանի, Սիամանբոյի, Ռուբեն Սևակի ժամանակակիցը լինելով, անտարբեր է եղել ազգային-ֆաղափական հարցերի նկատմամբ, հայելիս հակադրվել է ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությանը, իրավացիորեն մերժում է գրականագետը և տալիս ուրույն բացատրություն:

Աշխատության «Կյանքի և արևի կարոտով», «Քննությունը Մեծարենցի ստեղծագործության մեջ», «Մեծարենցի հումանիզմը» գլուխներում ֆենդատության են առնվում Մեծարենցի երգած մտափոխները, վերլուծվում բնորոշ բանաստեղծությունները, ցույց են տրվում դրանց զեղարվեստական անանձնահատկությունները: Ուշագրավ է բնության երգերի վերլուծությունը, որով

գրականագետը բնութագրում է Մեծարենցի պանթիզմը, բնության պատկերման միջոցով մարդկային խոհեր ու զգացումներ արտահայտելու նրա անանձնակի կարողությունը: Հեղինակի կարծիքով՝ պանթիզմը Մեծարենցի համար հասարակական ու զեղագիտական խնդիրներ լուծելու հիմնական միջոցներից մեկն էր, նրա աշխարհայացքի յուրահատուկ կողմերից մեկը:

Ապա էդ. Ջրբաշյանը բացահայտում է Մեծարենցի հումանիզմի հասարակական ախտերները, մարդու և բնության նկատմամբ ունեցած համապարփակ սիրո՝ կենսական արմատները: Մեծարենցը ևս ժամանակի մեր մեծ բանաստեղծների՝ Թումանյանի և Խահակյանի նման փառաբանում էր մարդու ներաշխարհում և բնության մեջ գոյություն ունեցող վեճն ու գեղեցիկը, մաքուր զգացմունքներն ու լուսավոր երազանքները և հենց դրանով էլ հակադրվում էր ժամանակաշրջանի հասանառության շափմալ իրականությանը: Նրա ստեղծագործությունը լինելով իր իսկ հումանիստական գաղափարների զեղարվեստական բարձր մարմնավորում, ձեռք էր բերում համամարդկային խորովանդակություն, դառնում տառապած աշխատավորության ցաված հոգու սպեղանին: Մեծարենցի բանաստեղծություններում, հոգվածներում ու նամակներում արտահայտված գրական-հասարակական հայացքների ֆենդատմամբ գրականագետը նկատում է, որ «անձնական ոչնչաբանությունները» վնասակեանապես մերժող բանաստեղծի համար գերագույն երջանկություն էր մարդու և բնության նկատմամբ անմեացող սերը, անձնագոհությունն ու «անանձնական ուրախությունը»:

Աշխատության կարևոր գլուխներից է «Մեծարենցը և սիմվոլիզմը», ուր հստակորեն պարզաբանվում են անցյալ դարավերջի և մեր դարակարգի Լիբրալական և ուս գրականության մեջ լայն տարածում ստացած այդ հոսանքի հետ Մեծարենցի առնչությունները: Սիմվոլիստ լինելու մեջ հանախ մեղադրվող Մեծարենցը հարկադրված էր հանդես գալ ինքնապաշտպանությամբ: Նա չէր համակրեցվում սիմվոլիստների փարոզած էսակենտրոն անհատապաշտության հետ և չէր հանդուրժում նրանց «բառերու անհնապույր խավարաբարդումները»: Մեծարենցի զեղարվեստական մտածողության և աշխարհիկական կարևորագույն կողմերի և սիմվոլիզմի տեսության հմուտ ֆենդատմամբ գրականագետը ցույց է տալիս, որ նա գտարյուն սիմվոլիստների հետ էսպես որևէ ընդհանրություն չունի և հիմնական հարցում ուղղակի նրանց հակադրությունն է՝ «մարդկանց համար բարիք գործելու իր անահման տենչով, լայն ու պայծառ հումանիզմով և մեծամոլ անհատա-

պնշտութեան, ննդ սուրբկտիվիզմի նետադա-
կան ժխտական» (էջ 141): Քայց սա, իհարկե,
չի նշանակում, թե Մեծարեւոյցը պարելով և
ստեղծագործելով հոգեբանական բարդ և սիմ-
վոլիզմի «գարգացման» ժամանակաշրջանում,
իսկապես շրջանցել է այդ հոսանքը բոլոր ա-
ռումներով: Այս իմաստով էլ իրավացի է էդ.
Ջրբաշյանը, երբ Մեծարեւոյցին գրական բոլոր
ուղղութիւններից դուրս կանգնած բանաստեղծ
համարողների, նրան Եվրոպայի մեծագույն
սիմվոլիստների շարքը դասողների կամ սիմ-
վոլիստներից առհասարակ «կտրողների» դատա-
դրութիւնները համարում է միակողմանի: Սիմ-
վոլիզմն տեսութեան, հայ գրականութեան մեջ
նրա առանձին կողմերի դրսևորման և առհա-
սարակ սիմվոլիստական պոետիկայի հարցերը
հենարկելիս հեղինակը կատարում է արժեքա-
վոր տեսական ընդհանրացումներ, կարևոր դի-
տողութիւններ, որոնք անհրաժեշտ են ոչ միայն
որպես Մեծարեւոյցի և սիմվոլիզմի կապը բա-
ցահայտող, այլև ընդհանրապես այդ հոսանքի
կական առանձնահատկութիւնները բնորոշող
ձևակերպումներ: Այս տեսակետից էլ հեղինակի
Եգրակացութիւնները իրենց նշանակութեամբ
դուրս են գալիս տվյալ մեծագրութեան սահման-
ներից:

Այստեղ առավել հստակ, քան նախորդ հրա-
տարակութեան մեջ, հեղինակը տալիս է Մեծա-
րեւոյցի ստեղծագործութեան տիպաբանական նը-
կարագիր: Մեծարեւոյցին իրոք ողմանտիկ բա-
նաստեղծ էր, որ իրականութեան ղեկավարում
նույն այդ իրականութեանը հակադրվում էր
ցանկալիքի, լավագույն կյանքի իր երազանքնե-
րով: Իհարկե, Մեծարեւոյցը իր ինքնատիպու-
թեամբ, ստեղծագործութեան առանձնահատկու-
թիւններով տարբերվում էր ինչպես դասական
ոսմանտիկներից, այնպես էլ ժամանակակից
նեոոսմանտիկներից: Գրական ուղղութիւնների
և հոսանքների հետ Մեծարեւոյցին ունեցած ա-
ռնչութիւնները ավելի պարզորոշ ցուցադրելու
նպատակով գրականագետն անդրադառնում է
միջնադարի մեծ բանաստեղծ Գրիգոր Նարե-
կացու հետ նրա ստեղծագործական կապին:
Մեծարեւոյցը Նարեկացուն գրական հսկա էր ան-

վանում ո՛չ պատահականորեն: Նարեկացին, որ
գիտեր «բառերը ծովածայն հնչեցնել և ծիծա-
ղալիսիտ ժպտեցնել», Մեծարեւոյցին ոգևորում էր
մարդասիրական, բնապաշտական իր գաղա-
փարներով, մարդուն երկրային մեղքերից մաք-
րելու և աստվածային կատարելութեան հասցը-
նելու իր վեհ ձգտումներով, կյանքի ու մահ-
վան, բնութեան ու տիեզերքի մասին իր խոր-
հորդածրոյութիւններով, այլև «լեզվական ու տա-
ղաշափական արվեստի անապառ գանձերով»
(էջ 158—161): Նարեկացին Մեծարեւոյցի ռուս-
ցիչն էր. դա խոստովանում է ինքը բանաստեղ-
ծը, նաև ցույց տալու համար, որ իրեն շատ
ավելի հոգեհարազատ է Նարեկացին, քան ժա-
մանակակից «սենյոլիստները»: Քայց տրամա-
դրութիւնների համապատասխանութեան, որոշ
գաղափարական ընդհանրութեան առկայութեան
Մեծարեւոյցի համար ստեղծագործական ու-
սումնասիրութեանից այն կողմ չի անցնում: Բա-
լուր դեպքերում Մեծարեւոյցը մեզ ներկայանում
է որպես հայրենի գրականութեան ավանդներով
սնկված, խորապես ինքնատիպ և անկրկնելի բա-
նաստեղծ:

Աշխատութեան վերջին՝ «Գունագեղ, անասն-
ման բարդ» գլխում հեղինակը բնութագրում է Մեծա-
րեւոյցի պոետիկայի հարցերը, բանաստեղծական
պատկերի կառուցման սկզբունքները, լեզվա-
կան-արտահայտչական միջոցները, նրա պոե-
զիայի տաղաշափական առանձնահատկութիւն-
ները:

Ուսումնասիրվող էյուրի խոր իմացութեանից,
գրականագիտական փորձառութեանից ու գի-
տական բարեխղճութեանից բացի, մեծագրու-
թեան հաշտվածութեանը մեծապես նպաստել է
մի այլ կարևոր հանգամանք՝ Մեծարեւոյցի հան-
դիս: հեղինակը անհուն սերը, որը երևում է
ցրքի ամեն էջում, ամեն մի հարցի բնարկ-
ման, ամեն մի բանաստեղծութեան վերլուծու-
թեան մեջ: Այդ սիրով ու շնորհակցամբ, հրա-
տակ ու հյութեղ լեզվով է շարադրված «Միտաբ
Մեծարեւոյց» մեծագրութեանը, որը էդ. Ջրբաշ-
յանի լուրջ ներդրումն է մեծարեւոյցագիտութեան
մեջ:

Ս. ՄՈՒՐԱՂՅԱՆ

**Ս. ԳԱՍՍՅԱՆ, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երե-
վանի համալսարանի հրատարակչութիւն, Երևան, 1978, 327 էջ:**

Ս. Գասպարյանի աշխատութիւնը նվիրված է
հայերենագիտութեան համար կարևոր և առդիա-
կան մի պրոբլեմի՝ ժամանակակից հայերենի
ածանցմանը և ածանցների ռուսումնասիրութեան-
ը: Մեծագրութեան մեջ բնութագրվում են ածանցա-
կան բաղադրութիւնների ընդհանուր տեսութեան,
ածանցումների ընդհանուր կառուցվածքային ա-

ռանձնահատկութիւնների ու օրինակաբանութեան-
ների լուսարբանման և ածանցների ձևա-իմաս-
տարբանական հարցերը: Հնդկականի/հիմնական
նպատակն է ժամանակակից հայերենի ածանց-
ման և ածանցական բաղադրութիւնների հա-
մաժամանակյա նկարագրութեանն ու կաղապա-
րումը, ածանցական բաղադրութիւնների ար-